

ղիկոսացն Սիմէօնի, Ղուկասու Լէն. մեծագործութեանց հետեւել, և մշտնջենաւոր արարք թողուլ ի Սուրբ Կաթողիկէս:

Ուստի ի Ռուսաստան ճանապարհորդած ժամանակ նոյն թուականին, երբ որ քաջալերութիւն և լեց ազգիս յառաջաւորներէ, և եկեղեցական տեսչութենէն դուռ օժանդակութիւն, դառնալով յԱթոռ՝ երկրորդ տարին, 1868, սկսաւ շինել Կաթողիկէ Եկեղեցւոյ Տաճարին կից արեւելեան շինութեան հաւասար՝ երեք նորակառոյց խորանները միանգամայն, պահելով արտաքուստ Եկեղեցւոյ խաչաձևութիւնը. որու արեւելեան թեք կկացուցանէր Եւագ խորանի արտաքին կիսաբոլորակ շէնքը. երեքն ևս կփածոյքարով, կամարայարկ և զմբէթայարդ, մեծամեծ լուսամուտներով, որոց միջինն ևս կիսաբոլորակ, որպէս ասացի՝ Եկեղեցւոյ խաչաձևութիւնը պահելու համար արտաքուստ: Եյս կիսաբոլորակի մէջն է դրուած մարմարոնեայ քարով այս նոր շինութեանց արձանագիրը, յամի 1869*):

(Շարունակել):

ԱՐԴԵՂԻՍՏՈՒԹՅԱՆ

(*) Այս խորանների շինութեան մեծ և առաջին պատճառն էր Տաճարի միջի կողմնական խորանների փոքրութիւն և անձկութիւնն, որոնք իրենց մթութեամբ և միակ անձուկ լուսամուտներով անլայելութիւն կրեւէին այսպիսի Աթոռանկատ Մայր Եկեղեցւոյ վայելչութեան, որոց մէջն օդ չխաղաղով, եկեղեցական զարդ ու թանկագին զգեստները փտութեան կենթարկէին, մանաւանդ հարաւայինը, որոց մէջ խառն ի խուռն և իրարու վրայ կգրուէին զգեստք՝ արծաթ թեղինաց հետ տեղոյ անձկութենէն օտպուելով:

ԸՍՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԸՉԵԿԻՐՔ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԱՏԻՆԱՑԻՈՑ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ.

(Շարունակել):

— Բայց դեռ Խաչակիրք չհասած ի Կիլիկիա, տեսցուք յորպիսի վիճակի էր այդ երկիրը՝ երբ կայսրն մտաւ անդր: Խորոս իշխանն մեռաւ ի 1168 թուին ժառանգ թողլով իւր մանուկ Ռուբեն որդին եւ յանձնելով խնամակալութիւնը իւր աներ թովմաս քաջ զօրապետին: Չայս լսելով Մլխի՝ եղբայր Թորոսի նկատաւ յարձակիլ Կիլիկիոյ վերայ եւ այնքան տապալակեցոյց զչայս, մինչեւ որ նորա անճարացեալ կացուցին զնա իշխան ի 1169 ամի: Մլխ մի անգամ յաղթեց կայսեր զօրապետաց եւ մի շահաւէտ հաշտութիւն արաւ՝ թէեւ իւր զործած անգթութեանց առթիւ սաստիկ ատելի եղեւ: Թովմաս փախուցեալ էր Սևտիօք, իսկ Ռուբեն՝ որ ազատեալ էր՝ զնալով ի Հռովմայ՝ մի քանի անօրէն անձանց ձեռօք սպանուեցաւ: Չօքն չը կարողանալով համբերել Մլխի այսպիսի անգութ զործոց (ըստ որում կասկածէին թէ մասնակից է եղել իւր եղբորորդւոյ սպանման) սպանեցին զնա ի 1174 ամի. յայնժամ չայր միաբանելով՝ ընտրեցին իւրեանց իշխան զՌուբեն որդի Ստեփանէի եղբոր Թորոսի, որ քաղցրաբարոյ ամէն էր:

Հեթում Լամբրոնի Հայ իշխանն, որ է Շերսէս Լամբրոնացւոյ եղբայրն, զժտելով ընդ Ռուբենի Տարսոն քաղաքի առման պատճառաւ՝ սկսաւ խռովութիւնք հանել. զայս տեսնելով Ռուբեն եկաւ եւ պաշարեց զԼամբրոն: Հեթում ոչ կամենալով խոնարհիլ՝ զրդեց Սևտիօքայ կոմս Բօժմենդ Գ. ն նպատակ իւրեան, եւ նա քարեկամաբար հրաւիրելով զՌուբեն՝ ձերբակալեց զքաջն առաջնոր կոխելով մարդկային նուիրական իրաւունքն, թէեւ ի 1184 ամի ազատեց ստիպուելով ի քաջութեանց Լեւոնի եղբոր Ռուբենի, ի կնութիւն ամեկով Ռուբենի Աղիտա դուստրն իւր որդւոյն: Յայնմ հետէ սկսաւ Ռուբեն հայրաբար կառավարել իւր տէրութիւնն, քաց ապա հրաժարական տալով աշխարհէն՝ յանձնեց կառավարութիւնը իւր եղբոր Լեւոնին եւ առանձնացաւ Գրագարկ կոչեցեալ վանուց մէջ:

Լեւոն լինելով մի արի, խելացի եւ փառասէր իշխան, շուտով ընդարձակեց իւր տէրութիւնը. յաղթեց իւր թշնամեաց, մահուանդ Գլին - Ասլանի լուստէմ որդւոյն, որ ասպատակ էր սիւնելի Կիլիկիա. նոյնպէս փախցրաւ Բէրիոյ եւ Գամասկոսի սուլթանները: Սոյն քաջ իշխանս չէր մոռնում նոյնպէս ի ներքուստ բարեկարգել պետութիւնը. շինեց ուսումնարանք, հիւրանոցք, որբանոցք եւլն: Ահա յիշխանութեան սորա կայսրն հասաւ ի Կիլիկիա, որպէս տեսցի ի ներքոյ ի բանից հեղինակին:—

Եւ ահա հասին ի սահմանս մի քրիստոնէայ պետութեան, որ ի Կիլիկիա. այդ երկրի կառավարիչը հետեալ էին Կ. Պոլսոյ կայսրէն եւ խաղաղութեամբ կը վարուէին ընդ Լատին քրիստոնէայա Պաղեստինոյ: Որովհետեւ այդ թագաւորութեան հիմնիչն էր մի Հայ. ուստի իւր յաջորդը կոչէին թագաւորը Հայաստանի: Այն ժամանակուայ թագաւորոջ իշխանն էր Լեւոն, որ թագաւորական տիտղոս էր առել *): Եկաւ ընդառաջ Խաչակրաց, բերաւ պաշար եւ տարաւ զնոսա ի Սիս: Աստի չուեց զօրքն 40 Յունիսի. Ֆրէտէրիկ, Սուարի դուքսն առաջապահ զօրաց հետ անցաւ գետի նեղ կամրջից. կայսրն որ ի յետնապահ զօրս, չհամբերելով զօրաց ընթացից դանդաղութեան, մտաւ երկվարան ի ջուր անցնելու միւս կողմն. բայց

(*) Շատ սխալ կարծիք. Լեւոն ոչ թէ ինքն էր թագաւորական տիտղոս իրենան տուել, այլ Ֆրէտէրիկոս Դ. Գերմանիոյ կայսրն, որ համարանալով ի զա՛, յղեց նմա մի փառաւոր թագ, որով Գրիգոր Զ. Հայոց Կաթողիկոսն օծեց զԼեւոն արքայ Հայոց ի 1198 Յունուար 6 ին ի Տարսոն: Հնդիկոսի օրինակին հետեւեց եւ Կ. Պոլսոյ կայսր Ալեքս Անգելոսն, որպէս եւ Հագարացոց Բագրատի սուլթանն: Պ. Հեղինակն յոյժ է սխալուել չորելով այդպիսի մի իրողութիւն, որ ոչ թէ միայն Հայ պատմագիրք, այլ եւ Գերմանացի հեղինակք վկայեն, ի թիւս որոց Վիլհելմոսը ժամանակակիցն Լեւոնի: Սակայն Լեւոնի արքայ պատկուիլն խիստ չարաքատիկ եղեւ Հայաստանի համար. հասկանալի է թէ առ իմէ այն ժամանակուայ պայսն, որ էր յիշեալ Կոնստն, խորհուրդ տուաւ Հնդիկոսին յիշել թագ առ Լեւոն, քանզի յայնժամ մի աւելի մտերիմ յարակցութիւն սկստի հաստատուէր Հայ Կաթողիկոսաց եւ Հռոմէայ դահի մէջ. Պապքն երազում էին ձգտել իւրեանց համաշխարհական տիրապիտութիւնն եւ Կիլիկիոյ վերայ՝ որպէս այդ մասին Լեւոնի թագաւորութենէն զկնի մի մեծ թղթակցութիւն բացին Հայաստանի Հայրապետաց եւ թագաւորաց մէջ Հայկական Եկեղեցին Հռոմէականի հետ միաւորելոյ նպատակաւ: Այդ բանախօսութեանց արդասիրն եղին Ունիթոսաց հաստատութիւնն Հայաստանի մէջ, այն Ունիթոսք՝ որոց չարութեանց պատմութիւնքն կարդալով եւ յիշատակքն տեսնելով, ամեն մի Հայ անհատի սիրտն ցոււմ է արեամբ:

Շաճ. Թարգմ.

ծերի ոյժն հաւասար չէր իւր հոգւոյ եռանդին. հոսանքն քշեց զնա եւ խեղդեց:

Այս իշխանիս մահն արհաւիրք սփռեց ի բանակի: Սուարի դուքսն ստանձնելով հրամանատարութիւնը՝ անկար եղեւ ի չափու պահել զօրքն հանգոյն իւր հօր: Համարն՝ նեղուելով անօթութենէ՝ դործեց քաղում չարութիւնս. հիւանդութիւնք եւս ճարակելով ոչ սակաւ աղետալի հետեւանք արտադրեցին: Յոլով Խաչակիրք մոռացման տալով իւրեանց երդումն, վերադարձան յերոպա. միայն մի սակաւամիւս բազմութիւն հետեւեց զբախն ի Տիրոս, ուր թաղեցին կոյսեր ոսկերքը. վասն զի իւր զազաթն եւ աղիքն ամփոփել էին ի շիրմի յԱնտիոք: Նոյնպէս Ֆրէտէրիկ Սուարի դուքսն ժամանելով յԱրայ՝ մեռաւ անդ ի 20 Յունվարի 1190 տենդից:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ.

Երրորդ Խաչակրութիւնն ծնունդ տուաւ մի նոր հոգեւոր ասպետական կարգի: Գերմանացի ոմն, որոյ անունն անյայտ է, կապրէր յերուսաղէմ իւր կնոջ հետ. սա հիմնեալ էր յամին 1128 մի հիւանդանոց իւր ազգի ուխտաւորաց համար եւ հրամանաւ պատրիարքին յօրինեալ էր եւ մի մատուռ նուիրեալ յանուն Աստուածածնայ: Համազն մարդասէր անձինք նըպաստեցին տարածման այդ ուխտի, ինքեանք անձամբ ծառայելով իւրեանց ազգի ախտացելոց: Որովհետեւ ի թիւս այդ եղբարց Ս. Մարիամայ (այս էր իւրեանց տուեալ անունն) կային եւ ասպետութիւնք յղացան մի միւտր, որ բաց ի խնամատարութենէ ուխտի՝ պաշտպաննն եւ սուրբ երկիրն յերեսաց անհաւատից՝ փոխելով պարզ հիւանդանոցն ասպետական կարգի: Գերմանացոց սնուցեալ նախանձն ընդդէմ Ասպնջականաց եւ Տաճարականաց, որ զուն ուրեք ընդունէին զԳերմանացիս, ստիպեց նոցա իրադործել այդ նպատակը: Աքեսցի պաշարումն հայթայթելով նոցա մի հզօր պաշտպան՝ մի պատեհ առիթ եղեւ իւրեանց համար: Բրէյնայ եւ Լուրէզի քաղաքացիք՝ որ ի ժամանակի պաշարման դտանէին անդ, ի դուռ շարժելով Գերմանացի անխնամ ախտակրաց վերայ՝ իւրեանց նաւուց առաջատուն զործածեցին մի մեծ վրանի տեղ, ուր քրիստոնէական ողորմածութեամբ հոգալին զախտացեալս: Հուսկ յետոյ երուսաղէմայ Ս. Մարիամայ

եղբարք առաջարկեցին Սուրբի զբսին հիմնել մի Գերմանական - ասպետական կարգ հանդոյն Տաճարականաց եւ Աստվածականաց: Յրէտէրիկ հաճ եւ հաւան ցոյց տալով իւրեան խոստացաւ միջնորդութեամբ իւր եղբօր Հենրիկոս Գ. կայսեր ընդունել քահանայապետական հաստատութիւնն. կարգն հպատակեց Ս. Օգոստինոսի կանոնաց. իսկ զգետն էր ճերմակ վերարկու արծաթածիր սեաւ խաչաւ. միայն Գերմանացի ազնուականք կարէին լինել ասպետ, սոսկ քաղաքացիք ստորին դասի մէջ պիտի մտանէին: Այս միաբանութիւնս Թեւոտնեան կարգի անուամբն յորջորջեցաւ. քառասուն ասպետք երդուեցան երուսաղէմայ պատրիարքի ձեռացմէջ ի 19 Նոյեմ. 4490, անուանելով մին յասպետաց Հենրիկոս - Վալտայօ՝ կարգապետ: Կարգն յապագային մեծ ժառանգութիւնք եւ կալուածք ունեցաւ (Երաւիւր 1), ի Գերմանիա, ի Հունգարիա եւն. յայտնի է այլ եւ՝ թէ դա ճրպիսի մի դեր խաղաց եւրոպական մի պետութեան մէջ 2):

Յրէտէրիկ Ա. կայսեր մահն վախճան չտուաւ երրորդ խաչակրութեան: Ֆիլիպ Բ. Օգոստոս 5) թագաւոր Գաղղիոյ եւ Հենրիկոս Բ. 4) արքայ Անգլիոյ՝

մարտնչէին ընդ միմեանս յորժամ ստացան երուսաղէմայ կորստեան լուրը: Այս երկու իշխանք այնքան յուզեցան, որ դադարեցուցանելով իւրեանց պատերազմը առին զխաչ հանճարեղ քարոզութեամբ Գիյոմի՝ արքեպիսկոպոսին Տիւրոսի՝ այն խելացի պատմագրի, զոր Արեւելեայք յղեալ էին յԱրեւմուտս: Առ ի մըշտընջնաւորութիւն յապագայս այս յիշատակի, երկու արքայից մի այսպիսի սուրբ դիտաւորութիւն տաճած վայրն կոչեցաւ Նուիրական - Դաշտ, ուր հիմնեցին եւ մի եկեղեցի:

Ֆիլիպ Բ. հանեց մի հրաման թէ՛ ոչ - Խաչակիրք պիտի վճարեն իւրեանց մտից եւ անշարժ կայից տասանորդն. — այս է Սալահատտին կոչեցեալ տասանորդն:

Ընդ թաղաւորաց խաչակրութեան եւ երեւելի իշխանք, ղուքսք, կոմսք, եպիսկոպոսք, ի թիւս որոց Ռիշար ղուքս Գիէնի անդրանիկ որդի արքային Անգլիացոց, Բօրէր Բ. կոմս Գրէյի հօրեղբորորդի արքային Գաղղիոյ: Պայմանադրեցին, որ Գաղղիացիք կրնն կարմրերանդ խաչ, Անգլիացիք սպիտակ եւ Ֆրամանք՝ կանաչ:

Սակայն խաչակիրք անագանեցան ի չուել մահուամբ Հենրիկոսի, որին յաջորդեց Գիէնի ղուքսն. այս իշխանս ասպետական բնութեամբ՝ այնքան ըզմիւր տենչայր խաչակրութեան՝ որ փութանակի միաբանեցաւ միւս խաչակրաց հետ:

Ի 24 Յունիսի 4490 Գաղղիոյ թագաւորն ընդունեց ի Ս. Գընի զըրօշն պատերազմիկ եւ օրհնութիւն Փրկչի փշեայ թագիւ: Երկու արքայք զնալով ի միասին մինչ ի լիոն՝ անջատեցան ի միմեանց մըտանելոյ ի նաւ, Ֆիլիպ ի ձենուա եւ Ռիշար ի Մարսէլլ: ձենուայի, Պիզայի եւ Վենետիկոյ հանրապետութիւնքն խոստացան հայթայթել զօրաց պաշար: Երկզորաց ժամադրութիւն էր ի Մեսին: Բայց նոր գժտութիւնք խափանեցին զօրաց ընթացքն ի Սիկիլիա. Ռիշար իւր ապահովութեան մասին հարկադրուեց զրաւել Մեսին քաղաքը եւ բռնադատել Թանկրէդ Սիկիլիոյ արքայն վճարելու 20,000 ունկի ոսկի ի հատուցումն օժտի Յովհաննա քեռ իւրոյ: Ապա ունեցաւ մի անհուճոյ կազ Գաղղիոյ արքային հետ՝ ծիգ Ժամանակէն ի վեր նշանուած էր Ֆիլիպ - Օգոստոսի քեռ Ալէքսէի հետ. Ֆիլիպ պահանջեց հարստնաւ, կատարումն, բայց Ռիշար մերժեց պատճա-

(1) Ի 4497 Հենրիկոս Զ. տուաւ կարգին Երրորդութեան հաստատ արքայաբանն որ ի Պալէրմ յափշտակելով Սիւսօ կոչեցաւ կարդիք, որ կողմակից էր ներկայացել Թանկրէտի: Եւսմ. Հեղ:

(2) Հեղինակն ակնարկում է Բրուսիոյ մասին, որ մնասաներորդ դարէն յառաջ հիւսիսային բարբարոս եւ կռապաշտ ազգերէն մին լինելով շատ չարիք կճացնէին զրացի քրիստոնէից միջեւ որ Երէքոստաներորդ դարում Թեւոտնեան ասպետք զկնի արիւնհոռւօշտ պատերազմաց եւ բազմամեայ սաստիկ արիւնհոռութեանց հազիւ կարողացան այդ վայրենաց բարքն քիչ մի կրթել քրիստոնէութեան տարածման միջոցաւ: Եւ. Թարգ:

(3) Ֆիլիպ էր որդի Լուի Է. Երիտասարդի. սա է մին յերեւելի թագաւորաց Գաղղիոյ եւ իւր թագաւորութեան ժամանակ փոռաւորում է այդ ազգի պատմութիւնը: 4482 ին մի մեծ հայածմունք յարուցանելով Հրէից վերայ, ստիպեց զնոսա թողուլ զԳաղղիա խորհրդով մի քանի Յանստիկ հոգեւորականաց, բայց ի վնաս տէրութեան. վասն զի ընդ նոսա անհետացաւ շուտով տէրութեան արծաթն, եւ վաճառականութիւնն սկսաւ գայթ ի գայթ ընթանալ: Քարայտակ արաւ Բարիզու փառոցներն: Զկնի վերադարձման ի Պաղեստինոյ իրազիկ լինելով, որ Ռիշար Արիւծաօրոն բանտարկուած է ի Գերմանիա հակառակ իւր եղբման, որ տուել էր Ռիշարին աւետարանաւ, յափշտակեց նորա մի քանի տեղերն: Այս եղեւ պատճառ մեծ արիւնհոգութեանց եւ պատերազմաց: Եւ. Թարգ:

(4) Հենրիկոս Անժու ո՛րդի Պալանդաժէնի յաջորդեց Է՛-Թիէնի 4454 ին. սա եղեւ իսկ պատճառ մահուան արքեպիսկոպոսին Դիէյ Ին. սա եղեւ իսկ պաշտօնեայք սպանեցին ի մէջ եկեղեցւոյ ի 4470 ամի: Պէրէ է մին խմբորիտաց Հռովմէական եկեղեցւոյ, որոյ տօնն կատարում է. պատճառ որ, ինչպէս ասուողն պատմիք, մեծ հրաշագործութիւնք էր լինում իւր գերեզմանի վերայ: Հենրիկոս մեռաւ 6 Յուլիսի 4489: Եւսմ. Թարգ:

ռելով, Հենրիկոս Բ. իւր հայրն մի մեղսաձառ յարակցութիւն էր ունեցել ընդ իշխանութեան, որ վաւերական վկայութեամբ հաստատեց. յայնժամ Ֆիլիպ ետ առնելով իւր խօսքն՝ կազմ վերջացաւ եւ անմիջապէս թագաւորը մտին ի նաւ եւ հասին մին՝ յԱպրիլի եւ սիւնն ի Յունիսի 1194 ամի յԱքեայ*):

Հազիւ Գուիտոն Լուսինյան գերծաւ ի զերութենէ՝ ետ ապախտ առնել կղերի ձեռամբ իւր Սալահատինի տուած երդումը, այն է քնաւ մի առնուլ գէն ընդդէմ նորա. նոյնպէս առաւ եւ Երուսաղէմայ թագաւորի մականունն. բայց զի՛նչ օգտիցէ մի թագաւոր առանց թագաւորութեան, քանզի Արեւմտեան Քրիստոնէից մնացած երեք քաղաքն, Անտիոք՝ էր ի ժառանգութեան Բօէմոնդ Գ. ի սրբոյ Բայմոնդի. Տրապիսի՝ որոյ իշխանն էր նոյն Բօէմոնդի որդի Բայմոնդն, որ հօր մահուանէն զկնի պարտէր միացնել երկու պետութիւնը, իսկ երրորդն Տիւրոս՝ էր ի ներքոյ իշխանութեան Մօնֆէրա*) սահմանակոմսի, որ մերձեց վերադարձնել զայն ուխտագրութ Լուսինյանի: Այլ եւ Անտիոքայ իշխանն հպատակ էր Յունաց կայսեր եւ ոչ Երուսաղէմայ:

(*) Ռիշար մերձեակով ի Կիլիկիայ Լեւոն «Հայոց Թագաւորն զնաց զիմաւորելու գնաւ եւ մի փառաւոր ընդունելութիւն արաւ Մաճ. Թարգ.:

(*) Որպէս զի խառնակութիւն չը ծագէ անուանց նոյնութեաց առթիւ, զեւեք աստ Անտիոքայ իշխանաց եւ Տրապիսոյ կոմսի անուանց դասակարգութիւնն:

Իշխանք Անտիոքայ. — Բօէմոնդ Ա. 1096 — 1111: Բօէմոնդ Բ. 1111 — 1131: Կոստանսիա եւ Բայմոնդ 1131 — 1149: Կոստանսիա եւ Բլենդ — Շաթիլոն, 1149 — 1165: Բօէմոնդ Գ. 1165 — 1201: Բօէմոնդ Գ. 1201 — 1255: Բօէմոնդ Ե. 1255 — 1257: Բօէմոնդ Զ. 1257 — 1274: Բօէմոնդ Է. 1274 — 1287:

Կոմսք Տրապիսոյ. — Բէրթրանտի 1109 — 1142: Պօն. 1142 — 1157: Բայմոնդ Ա. 1157 — 1157: Բայմոնդ Բ. 1157 — 1187: Բայմոնդ Գ. որդի Բօէմոնդ Գ. ի իշխանից Անտիոքայ 1187 — 1200: Այս տարուց ի վեր կոմսութիւնն միացաւ Անտիոքայ իշխանութեան հետ: Եւաճ. Հեղ.

Եւաճ. Թարգ. — Ինչ է ստիպում պատուելի Հեղինակին չը լիջիւր Բօէմոնդ Գ. ի թոռն Ռուբենը որ էր ճշմարիտ ժառանգ Անտիոքայ իշխանութեան եւ ոչ թէ Բօէմոնդ Գ. ն կամ որ նոյն է Բայմոնդ Գ. Միակեանն: Վերն իշխեցին որ Ռուբեն Հայ իշխանի Արիտայ զուարթն առնել էին Բօէմոնդ Գ. ի անդրաւիկ որդւոյն Բայմոնդին, (Տրապիսոյ իշխան): Արդ Բայմոնդ, որ ժառանգ էր ճանաչուել Անտիոքայ զանին վաղամեակի լինելով իւր որդի Ռուբեն, որ ունեցել էր Արիտայից, յաջորդեց Բօէմոնդ Գ. իւր պապին, բայց այս իշխանի միւս որդի Բայմոնդն օգնութեամբ Տաճարականաց վանեց զՌուբեն եւ տիրապետեց Անտիոքան Զայս լսելով Լեւոն Հայոց արքայն պատերազմի ելաւ եւ յաղթելով Բայմոնդին առաւ զԱնտիոք 1205 ին եւ վերստին հաս-

Գուիտոն հալածուելով ի Տիւրոսէ գնաց պաշարել յ0գոստոսի 1189 ամի զԱքեան, օժանդակութեամբ մի Պիզական նաւատորմի եւ մի քանի ասպետաց: Այս ձեռնարկութիւնս աղէտք արադարելոց էր, եթէ Երուսաղէմայ թագաւորն մի յանկարծաղէպ օգնութիւն չընդունէր: Մի քանի Գաղղիացի խաչակիրք, Գօտեֆրուա Լուիլիյանն եղբայր Գուիտոնի Բօբէր Բ. Կոմս Տրէօյի եւ այլ բազում իշխանք, կոմսք եւ եպիսկոպոսք անհամբեր Ֆիլիպի դանդաղանաց՝ յառաջացեալ էին, որպէս եւ մի քանի Գերմանացիք՝ ի թիւս որոց արքեպիսկոպոստնքն Պիզայի, Բրէմի միացան այդ քաջաց հետ. սորա ի սիւսին հանդիպեցան ի ճանապարհի մի նաւատորմի, որ 10.000 Գաննան եւ Ֆրիզոն Խաչակիրք բերէր: Յայրուստ Ֆրէտէրիկ Սուարի զուրմ հասաւ ընդ մնացորդս Գերմանական զւրաց. այսքան զօրութեամբ կարող էին մի հզօր յարձակումն առնել, սակայն Սալահատին արութեամբ պաշտպանելով, պաշարումն միջ բռնց:

Այդ միջոցում նստաւ Ֆիլիպ — Օգոստոս իւր ազգի խաչակիրք. Գաղղիացւոց եւանդն բորբոքեց քրիստոնէից քաջութիւնը եւ պատմեն նաեւ թէ՛ Ֆիլիպ կը տիրապետէր քաղաքին, եթէ ազնուութեամբ չկամենար թողուլ մի մասն այդ յաղթութեան Ռիշարին. պատճառ էր, զի յետինս մի պատաւ արքի առթիւ վեց եօթնեակ ուշացաւ: Իւր Լէլէնէր մայրն բերել էր ի Մէսին իւր նշանած Բէրանտիէր Դաւիարան եւ վերադարձեալ էր յԱնդրիա, սինչեւ նորահարսն ընկերակցութեամբ զՀայոյն Յովնանայի, քեռ Ռիշարի, պիտի հետեւէր իւր ամուսնոյն ի Պաղեստին. բայց ի 12 ապրիլի մի մեծ ալէկոծութիւն յառնելով ցրուեց նոցա նաքն, Ռիշար անկաւ րօզոս կղզին, իւր քոյրն եւ Բէրանտիէր ի Կիւրոս, որ էր ընդ իշխանութեամբ Իսահակ կոմսին. սա

տատեց զՌուբեն: Բայմոնդ ուրիշ ճար չը գտանելով սկաւ կաշառել Լատին կղերն եւ զրդել, որ թոյլ տուաւ իւրեան մի խիստ ապօրէն զօրձ կատարելու: Լատին հոգեւորականք, որ ոչ մի իրաւասութիւն չունէին խառնուելու Կիլիկիոյ գործոց, բանադրեցին զԼեւոն, թէ եւ Հայկական Եկեղեցւոյ պաշտօնեայք օրինաւորապէս մերժեցին: Այդ բանի վերայ բարկանալով Լեւոն հալածեց ի Կիլիկիոյ բոլոր Լատին կղերը եւ Տաճարական ասպետքը. ապա զէնք առնելով վերստին տիրեց Անտիոքայ 1211 ին եւ դարձեալ հասաւտեց զՌուբեն իւր զանի վերայ: Այս իրողութեան վկայ են նոյն իսկ Լատին պատմագիրք: Թէ որքան ապօրինաւոր էր Լատին կղերի քանադրանքն, թող ընթերցողը կարգան Ֆլէօրի Սքրայի «Քրիստոնէութեան պատմութիւնն», յորում կնքէ Լատին կղերն «անկարգ եւ անբարեկաշտ» բառերով:

յուզարկուելով ի կայսրէ կառավարիչ դուքս յորջորջմամբ՝ հետամծ էր եւ Սալահատինի զաշնակից էր եղել երկու իշխանութեաց վատ ընդունելութիւն տուաւ, որպէս գերիք: Ռիշար հասանելով խորտակեց յափշտակչի զօրութիւնն եւ պաշարեց զնա ի Նիկօզի: Իսպառնակ տեսանելով, որ Ռիշար օգնութիւն դտաւ նորեկ զօրաց զալտեամբ, որ Երուսաղէմայ թագաւորն, Անտիոքայ իշխանն եւ Տրապօլսոյ կոմսն բերել էին Անգղիոյ արքայի հետ զաշն կապելոյ, հարկադրեցաւ վճարել 5500 մարկ արծաթ, հպատակել Ռիշարի եւ նմա հետեւիլ ի Սիրիա օժանդակ զօրօք: Սակայն շուտով ստրջանալով իւր ընթացից վերայ՝ խոյս ետ Ռիշարի բանակէն, որով նորոգեցաւ պատերազմն: Նիկօզի երաց իւր զրուները, իսկ ի զղեակն Շէրինի գտին Իսահակի գանձն եւ զուտորն: Այս աղէտս ըստիպեց զնա գերի լինել Ռիշարի, որ կապելով արծաթեայ պարաւանդօք պահ ետ Գուխտոնին: Հուսկ յետոյ պսակելով զԲէրանժիէր ի Լիմբաս եւ թագադրել տալով զնա՝ հասաւ Յունիսի յՏՆ 1191 յԱքեայ:

Գաղղիացիք եւ Անգղիացիք յայնմ հետէ թափեցին իւրեանց բոլոր ճիգն տիրապետել քաղաքին. Ռիշար վարձատրում էր վեհապետական առատաձեռնութեամբ արուծիւնը, բայց ընդհուպ նախանձն փոխանակեց միաբանութեան եւ պառակտումն տիրեց: Դշխոյն Սիբիլ եւ իւր չորեանիս զստերքն մեռեալ էին Աքեայի առաջն. Կոնրադ Մօնտֆէրա՝ իշխանն Տիւրուսի պնդեց թէ Գուխտոնի իշխանութեան իրաւունքն զաղարեցաւ եւ զահն պատկանէր Իզաբելի, այս ինքն զստեր Ամօրի Ա. արքայի: Ուստի Իզաբէլի ամուսինն, որ էր Հուսֆրուայ տէր Տօրոնի՝ առաւ թագաւորական տիտղոսն, բայց Կոնրադ ազգակալութեան պատրուակաւ արծակել տալով Իզաբէլին Հուսֆրուայի ամուսնութենէն, ամուսնացաւ ընդ նմա, որով երեք թագաւորք հանդիսանային այդ աներկիր թագաւորութեան մէջ: Ֆիլիպ ընդդիմացաւ Լուսինյանի. Ռիշար Կոնրադի եւ քաղումը Հուսֆրուայի: Նոյնպէս Կիպրոս կղզին դարձեալ էր մի նոր առարկայ պայքարի. Գաղղիոյ արքայն պահանջէր, որ իւր հաճահօգն իւրեան բաժին հանէ Կիպրոս կղզիէն: Ռիշար ի փոխարինի խնդրէր Ֆլանտրիոյ կոմսի զանձուց եւ պետութեան կէսն պատճառելով որ, նա անժառանգ մեռեալ էր պաշարման միջոցին: Բոլոր բանակն բաժանեցաւ երկու թագաւորաց մէջ. Բուրգոյնի դուքսն,

Գենուացիք, Գերմանացիք, Տաճարականք յայտնեցին իզիրեանցս ի նպաստ Ֆիլիպի եւ Կոնրատի, իսկ Շամպայնի կոմսն, Ասպնջականք, Ֆլամանք, Վէնէտիկացիք, Պիզացիք ի նպաստ Ռիշարի եւ Լուսինյանի:

Սակայն առաջարկեցին զաղարեցուցանել իւրեանց վէճն մինչ յառումն քաղաքին, ուստի կրկնեցին Խաչակիրք իւրեանց ջանքը. Սէյֆուտդին՝ Էմիրն, որ էր հրամանատար քաղաքին անձնատուր եղել ի 42 Յուլիսի 1194. Սալահատին պիտի վճարէր 200,000 Բիւզանդեան ոսկի, վերադարձնէր ճշմարիտ խաչն եւ ազատէր 200 ասպետք եւ 1500 այլ բանտարկեալ քրիստոնեայքը: Աքեայի պահապան զօրաց մի մասն, բոլոր Էմիրք բանտարկեալ մնացին պատասխանելոյ Սալահատինի զաշնադրութեան կատարմանն մինչ ի 40 օր. վերջինս թէ եւ անմխիթար դոյնպիսի մի քաղաքի կորստեան վերայ, ուր ի պահեստի կայր Եղիպտոսի եւ Սիրիայի զէնքն՝ հաստատեց անձնատուրութիւնն եւ ձեռն արկաւ յարդիւնս ածել թէութիւնքը:

Աքեայի պաշարումն պատճառ եղել Գաղղիացի ընտիր ասպետաց կորստեան, յորոց մին էր Ռաուլ՝ այնքան հռչակաւորն յողբերգութիւնս, որ ի ժամու մահուան պատուիրեց իւր սիրտը տանել Ֆաէլ տիկնոջ, իւր մտածմանց առարկային:

Քաղաքը հաւասարապէս բաժանեցին երկու թագաւորք: Լէոպոլտ, դուքս Աւստրիոյ, որ առաջինն էր եղել ի քաղաք մտանալն տնկելով իւր դրօշակն մի բուրգի վերայ, Առիւծասիրտ Ռիշարն ետ ի գետին տապալել զայն եւ քարշել ի փողոցս: Գերմանացիք լցեալ նախատանօք ընդ այս զօրծ անարգանաց, յետ քաշուեցան եւ զնացին բանակել արտաքոյ քաղաքի՝ պատեն առիթ զիտելով վերադառնալ ի հայրենիս իւրեանց, պատճառ որ՝ սակաւամիւ լինելով վրէժնալիկ լինել անկարենային: Սակայն սրտակտումն զեռ տիրէր զանազան կուտակցութեանց մէջ եւ կողպտից բաժանումն եղել առիթ նոր վիճից: Ռիշար մի ժողով զումարելով ի 27 Յուլիսի 1194 վճռեց, որ Երուսաղէմայ թագաւորութիւնն մնայ Գուխտոնի մինչ ի մահ, իւր յաջորդն լինի Կոնրադ իսկ եթէ վերջինս մեռանէր անյաջորդ Ռիշարի բնակութեան միջոցին: Սուրբ Երկրում, սմա անկ էր ընտրել նորա յաջորդը:

Ֆիլիպ — Օգոստոս զժողովի զիւրայոյզ Ռիշարի զործածած խտուրթիւններից, թողեց Պաղեստինը Օգոստոսի սկիզբներում. ունէր եւ մի երկրորդական պատ-

Ճառ վերադառնալոյ ի Գաղղիա, մի հիւանդութիւն՝ որ Թափեց իւր մազերը եւ եղունգներն տանջում էր զինքն: Թողեց Անգղիոյ Թագաւորին 10,000 հետեւակը եւ 300 ասպետը ընդ հրամանատարութեամբ զբախն Բուրգոնի, ընդ նմին եւ եռամեայ անհրաժեշտ կարեաց մասին հարկաւոր գումարն, բայց նախ քան զուղեւորուիլն՝ երդուեց աւետարանաւ ոչ յարձակիլ Ռիշարի պետութեան մէջ ի բացակայութեան սորա:

Թէ եւ Ռիշար սքանչելի արութիւնը գործեց եւ արժանացաւ Առիւծասիրտ մականուան, սակայն Անգղիացի պատմագրաց զրուատանքն ոչ կարեն արդարացնել նորա անգթութիւնն եւ արեան ծարաւը, որ Աքեայի անձնատուր լինելու միջոցին ցոյց տուաւ: Անհնարին է մեզ որոշել ժամանակակից հեղինակաց պատմութեանց մէջ եղեալ վիճաբանութիւնքը, այս ինքն Ժօֆրուա Վիլիսօֆի եւ Բօհաուզ — դինի, բայց յօժարական է երեւում, որ իրաւունքն Սալահատինի կողմն էր, եւ եթէ Ռիշար յանցաւոր չէ այն նենգութեան մասին, որ արեւելեան պատմագիրը կամբաստանեն, սակայն շատ ծանծաղամտութեամբ ցոյց տուաւ իւր յիսալից պահանջմունքն: Եղելութիւնն այս է, որ իրօք Սալահատին յարդիւնաւ չածեց անձնատրութեան դաշինքն որոշեալ ժամանակում, բայց հաստատեց որ անկար էր եղել կատարել, եւ առ ի ցոյց իւր բարի կամաց՝ առաջարկեց առ ժամանակեայ՝ արծաթի կէսն, ճշմարիտ խաչն եւ 600 բանտարկեալք: ստոյգ է նա եւ, որ ինքն եւս իւր կողմանէ պահանջեց ազատութիւն իւր պատանդաց կամ մի ապահովութիւն նոցա կենաց: Ռիշար տեսնելով, որ Օգոստոսի 20ն հասած է եւ Սալահատին բոլորովին բաւականութիւն չէ տուել զաշնադրութեան թէութեանց մասին, տանել տուաւ սուլթանի բանակի առններ մի դաշտի մէջ 2000 տանիկ եւ կոտորեց: Սալահատին կարող էր վերելժիւնդիր լինել այս զազանական գործին հեղուկ իւր մօտ գտնուած քրիստոնէից արիւնը, բայց զսպեց իւր վրէժնդրութիւնն: միայն երդուեց չը շնորհիլ յայնմ հետէ մի քրիստոնէի կեանք՝ որ անձնատուր լինէր իւրեան:

Օգոստոսի 20-ի կոտորածէն զկնի, Ռիշար յանձնելով անմիջապէս Աքեայի պահպանողութիւնն եւ իւր լծակիցն, քոյրն Բէրթրան եւ Լ.Թիւն ասպետաց համայն խաչակրաց հետ ուղեւորեցաւ դէպ յԱսկոպն: Այս Խստութեւր ուղեւորութեան միջոցին քրիստոնէայք

յարաժամ վիշտ եւ նեղութիւն էին կրում Սալահատինէն եւ իւր եղբայր Մէլիք — Աղըլէն: Առօրեայ պատերազմ էին անում, որ յաճախակի դադարում էր բանադնացութեամբ Մէլիք — Աղըլի, որ այդ պարագայում լիազօր երեսփոխանի պաշտօն էր վարում ի տեղի իւր եղբոր:

Սեպտեմբերի 7-ի յաղթութիւնն, որ եղեւ առնութեւր Արսուֆի ուր Սալահատին կոր ի զուխ զարծաւ շնորհիւ քրիստոնէից հիւսրաշ արութեան, վճռողական կը լինէր. եթէ Ռիշար թէ ի հրամանատարութեան մարտի եւ թէ ի հալածման թշնամեաց մի իսկ զօրապետի տաղանդով զարգացեալ լինէր. Սալահատին ժամանակ թողեց գումարել իւր պառակտեալ զօրքը եւ սուլթանն զերազոյն ցոյց տուաւ ի հանճարի քան իւր յաղթողն: Ասկալոնի եւ քրիստոնէից մէջ կայ առնելով հրամայեց կործանել այդ քաղաքը, որ իւր պետութեան ամենազեղեցկաց միւնն էր: Բօհաուզտին սրտաշարժ կերպիւ կատարէ սուլթանի տաճած ավստանքն տալով այդպիսի մի հրաման, որ պետութեան իրաց հանգամանքն ստիպանօք պահանջէր:

Քրիստոնէայք իրազիկ լինելով՝ պոտաղեցան ապա վերականգնել զՅոպպէ, որ նոյնպէս կործանեալ էր, մինչդեռ Սալահատին նկրտէր լաւապէս պատսպարել զԵրուսաղէմ: Այդ իսկ միջոցին Ռիշար սկսաւ կարեւոր բանադնացութիւնք առնել վասն խաղաղութեան եւ Տիրոսի իշխանն առաջարկեց սուլթանին մի վրիժական եւ պաշտպանողական զաշնակցութիւն ընդ դէմ քրիստոնէից, այնու պայմանաւ՝ որ Սիդոն եւ Պէրութ ինքեան թողուի, որում հաւանութիւն տուաւ Սալահատին պահանջելով միայն, որ Կոնտաղ իշխէ Աքեայի եւ ազատէ բանտարկեալ տանիկ պատանդքը: Ռիշար իւր Յովհաննա քեռ ձեռն առաջարկեց Մէլիք — Աղըլի Պաղեստինոյ Թագաւորի մականուամբ: Սալահատին ընդունեց, վասն զի հաւանականաբար զիտէր պատրանք լինէր. իրօք Ռիշար յետս կասեցաւ պատճառելով, որ զյիսոյն Յովհաննա յօժար չէ ամուսնանալ մի Մուսուլմանի հետ: Սոյն բանախօսութեանց առթիւ եղին մի քանի տեսակցութիւնք Անգղիոյ արքայի եւ Մէլիքի մէջ, որք մտերմութիւն կապեցին միմեանց հետ:

Իսկիզբն դարնան 1192ի խաչակիր զօրքն լի բաշնութեամբ եւ եռանդով յառաջացաւ դէպ յԵրուսաղէմ. բայց Ռիշար հետեւելով իւր յողորմ զարուց

զկնի միօրեայ ճանապարհորդութեան փոխելով ընթացքը ուղեւորութեան ղեկ յԱսկարօն. խաչակիրք այնքան ի դժգոհութիւն շարժեցան, որ մի մեծ բազմութիւն ճանապարհի կիսում թողեց վարքայն. սա էստա Ասկարնի աւերակաց ի20 հունվարի 1192 ամի եւ հրամայեց վերանորոգել: Անդ լուր ստացաւ յԱնգղիոյ այն խռովութեանց մասին, որք նայթել էին եւ որոց մասին անհրաժեշտ էր իւր ներկայութիւնն:

(Երբնախնէ):

Թ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆՅ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ.

(Երբնախնէ):

Արարչութիւն ըրոյ էս՝ որոշումն — ջուրն յայնժամ է յաջողակ եւ արդիւնաւետ՝ երբ չէ մօրական, երբ երկրի բարեխառնութենէն մասամբ իւր բարբեր բարեխառնութիւն ունի, երբ պարունակէ մթնոլորդական օդոյ ստոյգ չափն եւ ածխածին եւ լուծեալ գործարանաւոր գոյացութիւնս, վերջապէս երբ նորա բարձած հողախառն աղբն եւ տիղմն չեն չափազանց, եւ ոչ ինքնին փաստակարգ աճեցման:

Մշակագործութեան մէջ ոռոգումն առնու անուն գործարանաւոր ոռոգման. քանզի ջուրք զայդ պաշտօն ո՛չ կարեն կատարելագործել առանց խողովակի եւ ջրմուղի: Այս պարզ երկիրն արագ արգասաւորելոյ համար՝ սակաւատաղաւոր աշխատանաց պէտս ունին մանաւանդ մարգագետինք, աւազուտ երկիրն, եւ ցամաքաւորութեայ ջերմ երկիրն: Այս աշխատանօք նորաձեւութիւնն՝ երկրի կենդանա-

րար շնչերակներովն կարէ աւելափոխել աւերիչ հեղեղս: Ըստ բուն մեծութեան՝ այս նորաձեւութիւնն Մաւրիտանեան Սպանիոյ, Հոլմայ, Ապրիպոսի, Պարսկաստանի եւ Բաբելոնի հին բաղդաւորութեանց շատ է օգնած. նա գործեց նա եւ Լոմբարտիոյ, Սպանիոյ Ալալանսնահանգաց, Սեվիլիաց եւ Վօզլուզի իշխանութեան հարստութիւնն: Ոռոգման աշխատանացն ձեռնարկութենէն յառաջ՝ պէտք է ապահով լինել թէ, կարող է արդեօք ոռոգելի հողոյն ջուր հասուցանել եւ ջրոց տարածութեան երաշխաւոր լինել. որով եւ կարող լիցին պատրաստել, եւ ազատ վայելչութեան կարեւորութեան վերայ ապահով լինիլ. եւ բաւական լինել կատարել զառաջի եղեալ նպատակն: Հայնժամ ամենայն ծախուց հաւանական զինն պատկերացուցանել եւ բաղդատել ոռոգելի երկրի տարածութեան խոստացած շահուց հետ: Իտալիայի երկրի եւ Վաղրիոյ հարաւային կողմանց մեծ մասին մէջ կարեն ջրոյ 1000 խորանարդ մետրն բաւական համարել մի արտավարին, որոյ վարձն է 40 կամ 50 փունդ: Տարեկան տասն անգամ ոռոգման համար կատարելիք աշխատանաց կարգն ներփակի յետագայ կէտից մէջ:

1 Ըբնախնէ էս՝ զի ըրոյ: — Օր բարձունի թմբոց եւ սահանաց (Սուբինտի) օգնութեամբն: Ջուրն՝ որոյ վերայ խնդիրն է, պէտք է յայնժամ զարտուղել իւր ընթացքէն՝ երբ քան իւր առաջիկայ ելանելի վայրն, ստորին գրութեան մէջ է. եւ զորս ջրաբաշխական մեծազին գործարանի օժանդակութեամբն այնտեղ բարձրացուցանել պէտք է: